

Բանալի բառեր՝ մատրիցա, դեֆլյուտի հավանականություն, նոր հնարավորություններ, ժամանակային շարքեր:

**ՀՏԳ 336.77**

## ՎԱՐԿԵՐԻ ԴԵՖՈՒՏԻ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ՀՀ ՀԱՄԱՐ

Ատենախոսության թեմա՝  
**Տնտեսության իրական հատվածի վրա ֆինանսական համակարգի կայունության ազդեցության հիմնախնդիրները**

Գիտական ղեկավար՝  
**Ռուբեն ԳԵՎՈՐԳՅԱՆ**  
 Տնտեսագիտության դոկտոր

**Անահիտ ԲԵԾԵԾՅԱՆ**

ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի ասպիրանտ

Բանկերը և վարկային կազմակերպությունները «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համապատասխան առնվազն ամիսը մեկ անգամ պարտավոր են դասակարգել վարկերը, ըստ ռիսկայնության<sup>1</sup>: Ընդունված է ըստ այդ հատկանիշի վարկերը դասակարգել ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի վարկերի: Վարկերի ռիսկային դասերի միգրացիայի վերաբերյալ պատմական շարքը կարող է օգտագործվել գործող վարկերի չվերադարձի հավանականությունը գնահատելու համար: Վերջինս կարևորվում է մակրոայրուղենցիալ քաղաքականության և ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից: Դեֆլյուտի հավանականությունը սահմանվում է որպես որոշակի ժամանակահատվածում աշխատողից դասակարգված վարկերի տեսակարար կշիռը աշխատող վարկային պորտֆելում: Ըստ ԿԲ մոտեցման՝ աշխատող են համարվում ստանդարտ վարկերը, ըստ միջազգային մոտեցման՝ աշխատող են համարվում ստանդարտ և հսկվող վարկերը: Բազմակողմանի վերլուծությունը պահանջում է դեֆլյուտի հավանականությունների հաշվարկ տարբեր ֆինանսական կազմակերպությունների և ժամանակահատվածների համար ըստ տարբեր չափանիշների:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ վարկային ռեգիստրի տվյալների շտեմարանների հիման վրա ստեղծվեց վարկերի ռիսկերի միգրացիայի հաշվետվական ձևը հաշվարկող Մատրիցա ծրագիրը: Վարկերի ռիսկերի միգրացիայի հաշվետվական ձևը ներկայացված է ստորև՝ աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1.**  
**Ռիսկերի միգրացիայի հաշվետվական ձև**

Վարկեր		T					
		Մտանդարտ	Հսկվող	Ոչ ստանդարտ	Կասկածելի	Անհուսալի	Վերջնական մարումներ
T-1	Մտանդարտ						
	Հսկվող						
	Ոչ ստանդարտ						
	Կասկածելի						
	Անհուսալի						
Նոր տրամադրված վարկեր							

<sup>1</sup> «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ», 1999

Աղյուսակ 2.

Դասակարգված վարկերի միջանկյալ դեպքեր, հաշվետվական ձև

Ժամանակահատվածի սկզբում և վերջում աշխատող վարկեր, որոնք ընթացքում գոնե մեկ անգամ դասակարգվել են:	Ժամանակահատվածի սկզբում ստանդարտ և վերջում մարված վարկեր, որոնք ընթացքում գոնե մեկ անգամ դասակարգվել են:	Նոր տրամադրված և ժամանակահատվածի վերջում աշխատող վարկեր, որոնք ընթացքում գոնե մեկ անգամ դասակարգվել են:	Նոր տրամադրված և ժամանակահատվածի վերջում արդեն մարված վարկեր, որոնք ընթացքում գոնե մեկ անգամ դասակարգվել են:
--	--	---	--

Ծրագիրը հնարավորություն է տալիս ստանալ տարբեր պարբերականությամբ և պարամետրերով, քանակային և ծավալային ժամանակային շարքեր մատրիցայի ցանկացած էլեմենտի համար, կատարել LTV-ի հաշվարկ, ստանալ դինամիկ դեֆլյուտի հավանականություններ, ունենալ ինչպես պաշարային, այնպես էլ հոսքային տվյալներ, կատարել բանկ առ բանկ համեմատություններ, ստացած ժամանակային շարքերով կատարել վերլուծություններ, որոնք մինչ այժմ հասանելի չէին ՀՀ համար:

Ծրագիրը հնարավորություն է տալիս դեֆլյուտի հավանականությունների հաշվարկը իրականացնել ըստ մի շարք պարամետրերի<sup>2</sup>՝ արժույթ, մարզ, անձի տեսակ, վարկատեսակ, վարկավորման ճյուղ, ըստ առանձին ֆինանսական կազմակերպությունների՝ բանկեր, վարկային կազմակերպություններ:


Ծրագիրը հնարավորություն է տալիս ստանալ մատրիցա պահի դրությամբ՝ օրինակ, ինչպես նաև ստանալ մատրիցայի ժամանակային շարքեր՝ ամսեկան, եռամսյակային, կիսամյակային, տարեկան, ամսեկան սահող տարեկան:

Ստորև ներկայացված են ծրագրից ստացված առաջին արդյունքները.

Ըստ գծապատկեր 1-ի՝ ծավալային PD-ները մինչև վերջերս գերազանցել են քանակային PD-ները<sup>3</sup>, առավելագույնի հասնելով ճգնաժամի ժամանակ, ինչը նշանակում է, որ առավելապես դեֆլյուտի են ենթակա խոշոր վարկերը:

Ծավալային PD-ն գերազանցել է քանակայինը հիփոթեքի, գյուղատնտեսության, առևտրի և շինարարության ճյուղերում: Քանակային PD-ն գերազանցել է ծավալայինը սպառողական, արդյունաբերության և տրանսպորտի ճյուղերում: (Տես՝ գծապատկեր 1, 2):


**Գծապատկեր 1.**  
**Քանակային և ծավալային PD**



<sup>2</sup> «Բանկերի և վարկային կազմակերպությունների հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին ՀՀ տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության կարգ»

<sup>3</sup> Ծավալային PD-ի հաշվարկելիս դեֆլյուտի հավանականությունների հաշվարկի բանաձևում վերցվում է համապատասխան վարկերի բալանսի գումարային ցուցանիշը, իսկ քանակայինի դեպքում՝ համապատասխան վարկերի գումարային քանակը:


Գծապատկեր 2.  
Քանակային PD՝ ըստ ճյուղերի



Դեֆոլտի հավանականությունները առավելապես բարձր են եղել սպառողական և շինարարության ճյուղերում (տես՝ գծապատկեր 2.):


Ըստ արժույթի դեֆոլտի հավանականությունները դիտարկելիս (տես՝ գծապատկեր 3.) կարելի է նկատել, որ քանակապես ավելի մեծ են դասակարգված դրամային վարկերը, սակայն ծավալով գերազանցել են դասակարգված արտարժույթային վարկերը:

Գծապատկեր 3.  
PD՝ ըստ արժույթի




Ինչպես և կարելի էր սպասել (տես՝ գծապատկեր 4.), մասշտաբի էֆեկտը գործել է ճգնաժամի ընթացքում՝ խոշոր բանկերի վարկային պորտֆելը ավելի փոքր չափով է դեֆոլտի ենթարկվել, քան միջին և փոքր բանկերինը:

**Գծապատկեր 4.**  
Միջին բանակային PD տարբեր մեծության բանկերի խմբերի համար




Դիտարկելով հիփոթեքային վարկերի դեֆոլտի հավանականությունները վարկի տրամադրումից հետո առաջին տարվա ընթացքում (տես՝ գծապատկեր 5.)՝ կարելի է նկատել, որ պիկերը հանած, միջին դեֆոլտի հավանականությունը 2 տոկոս է եղել: Ժամանակի ընթացքում տրենդը աճող է եղել, ինչը վկայում է վարկավորման պայմանների թուլացման մասին: Գծապատկեր 6-ից երևում է, որ ժամանակի ընթացքում աճել է նաև LTV-ի արժեքը, ինչը նույնպես հաստատում է մեր ենթադրությունը:

**Գծապատկեր 5.**  
Առաջին տարվա ընթացքում դասակարգված հիփոթեքային վարկեր (բանակային)




Գծապատկեր 6.  
LTV Նոր տրամադրված անշարժ գույքի ձեռքբերման հիպոթեքային վարկերի



Որպես վերլուծությունների նախնական փուլի ամփոփում՝ գծապատկեր 7-ը հաստատում է այն տրամաբանական ենթադրությունը, որ ավելի բարձր ռիսկային դաս ունեցող վարկերը առավել հակված են դեֆոլտի, քան ստանդարտ և հսկվող վարկերը: Իսկ ճգնաժամի պարագայում բոլոր ռիսկային դասերի դեպքում էլ դիտվել է վարկերի՝ անհուսալի դառնալու հավանականության կտրուկ աճ:

Գծապատկեր 7.  
Անհուսալի դառնալու ընդհանուր հավանականությունը



Որպես ամփոփում նշենք, որ ստեղծված Մատրիցա ծրագիրը մի շարք վերլուծությունների համար անհրաժեշտ տվյալների բազա է ստեղծում և կարող է հետագա հետազոտությունների համար արժանահավատ հիմք հանդիսանալ:

Ներկայացվել է 27.01.2018թ.  
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.